ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2 դեկտեմբերի 2021 թվականի N:393-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի նոյեմբերի 26-ի N 145 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի մարտի 30-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության առողջապահական կազմակերպություններում հանձնաժողովներ ձևավորելու, հանձնաժողովների անհատական կազմերը, աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 9-ի N 70 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 62-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով հաստատված N 5 հավելվածում «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում

չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-32) անհատական կազմում Ազատուհի Ֆարաջյանի փոխարեն ընդգրկել Աննա Արշալույսյանին:

2. Այդ կապակցությամբ Որոշման N 5 հավելվածի 4-րդ կետում «Ազատուհի Ֆարաջյան» բառերը փոխարինել «Աննա Արշալույսյան» բառերով:

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է